

ԴԱՎԻԹ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱՐԱՀԵՏՆԵՐ

Բանաստեղծուններ

Խմբագիր՝ Հովհաննես Սարոյան

ԵՐԵՎԱՆ, Միտք, 2001թ.

ԴՈՒ

Դու մի հուշ ես իմ կորած անցյալում,
Իմ ապագայում՝ փոքրիկ հույս,
Դու արձագանքն ես տառապանքներիս
Կործանումից փրկությունս:

Դու մի խարույկ ես հեռու անտառում,
Եվ իմ սրտում միշտ անմար ես մնում:
Դու հուշ ես, դու հուշ՝ կորած անցյալում,
Կորած անցյալի անապատներում:

Միևնույն է, հույսս չի հանգչում երբեք,
Չի հաշտվում կորուստի մտքին,
Բայց արդեն շատ ուշ է ինչ-ոք բան փոխել,
Եվ փախչել դաժան կյանքի ընթացքից:
15.10.1997թ.

ԷԼԵԳԻԱ

Պառկեի մեր դաշտում,
Նայեի երկնքին,
Սուզվեի երկնքի անեղո կապույտում,
Խորհեի, տիկրեի,
Աչքերս փակեի
Ու հարբած բույրերից՝ քնեի խոտերում:

Անձրևի վար թափվող
Շիթերից զարթնեի,
Դառնայի ընկերը վարարող առվակի,
Վազեի նրա հետ,
Ու թրջված հազուստով
Բացեի կարոտով դուռը մեր տնակի:
11.05.1997թ.

ՀՈՒՇ

Լուսնկա զիշերով
Հանդարս ու միայնակ
Կշրջեմ ծովափում դյութական,
Կղիտեմ՝ ինչպես են
Համբուրգում մեղմագին
Զրերն ու երկինքը կուսական:

Կիշեմ մեր անդարձ
Հեռացած օրերը
Ու քեզ երջանիկ պահերն իմ,
Անմոռաց խոսքերը
Եվ սիրո արցունքները,
Ինչպես միշտ, կտանջեն իմ հոգին:
23.04.1997թ.

ՀԱՅԱՍՏԱՆ

Խավարում կորած, կարոտից ծեծված
Իմ փոքրիկ, փոքրիկ, փոքրիկ Հայաստան,
Ու՞ր է կորել քո հայացքը հպարտ,
Քո սեղ աչքերի նայվածքն առնական:
Մի՞թե ընկել է զինվորդ անպարտ,
Մեր ազգի պաշտպան զինվորը արի,
Մի՞թե կորել է հպարտությունը
Մեր նախնիների,
Որ մեր սրտի մեջ
Միշտ նմանվում է Արարատ սարի:
Կրկին բարձրացիր հրդեհի միշից
Թոշունի նման,
Իմ փոքրիկ, փոքրիկ, փոքրիկ Հայաստան:
1996թ.

ՄԵՎԱՆ

Ես սիրում եմ կապույտ աչքերդ, Սևա՛ն
Անծայրածիր զուլալ դաշտերդ՝ ջրի,
Հորիզոնդ՝ մշուշներում իրական,
Ալիքներիդ խաղաղ նիրհը ափերին:

Թագուհին ես բոլոր, բոլոր լճերի,
Հմայագեղ մեր հիացքն ես դյուրական,
Քո երազը իմ Հայաստան աշխարհին
Լուս է տալիս գետի տեսքով Հրազդան:
1996թ.

ՀԱՅՈՑ ՀՈՂԵՐԸ

Հայոց հողերը քարից քամված են,
Թավիշ կանաչով սակայն օծված են,
Մեր անձնագիրն է հողն այս, անունը,
Հայոց հողում է կանգուն մեր տունը:

Յանել ենք, ջրել դառը քրտինքով,
Որ առողջ լինենք և ուժեղ՝ հոգով,
Հայոց ջրերը մեր նոր երգերն են,
Հայոց լեռները մեր հիմն վերքերն են:
1996թ.

ԱՇՈՒՆ

Երկինքը մթնել է.

Աշուն է զալիս՝

Տերևաթափով ոսկեգույն:

Կարծես ծերացել է

Մոտակա այզին.

Պարզկա զիշեր է

Այտերին իջնում:

Ամռան օրերից

Թախծոտ մի հուշ է

Մնացել միայն,

Ինչ առինքնող է

Այս կյանքը դաժան:

Քամու սուլոցը

Կարծես հուշում է

Գալուստը աշնան,

Ու արթնանում են

Կրկին հուշերը

Անդարձ հեռացած

Սի ուրիշ աշնան:

30.09.1996թ.

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

Արի այսօր մեր մանկության

Դաշտը գնանք,

Գնանք՝ քաղենք իին հուշերը մեր կյանքի:

Կանաչներում նստենք մի քիչ

Ու զրուցենք,

Որ հոգսերից թեթևանա մեր հոգին:

Հիշենք՝ ինչպես ենք խաղացել,

Ուրա՝ իս, անհոգ,

Թռվացել՝ առավոտից երեկո,

Եվ ինչպես է արտույտի պես

Թռել անցել

Խենթ ու խելառ մանկությունը հոգեթով:

1996թ.

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒՆ

Հայոց լեզուն իմ սրտի դոփյունն է

Ուժն է զրավոր իմ նախնիների,

Հայոց լեզուն իմ կյանքի իմաստն է
Ու լույսն է գալիք մեր սերունդների:

Հայոց լեզուն մեր ապրելու կիրքն է՝
Ե՛վ մեր աշխարհում, և՝ աշխարհից դուրս,
Մեր և այսօրվա, և՝ վաղվագիրքն է,
Որ ամեն հայի նվիրում է լուս:
1996թ.

Մինչև լուսացավ,,
Կիսալուսինը
Իր ձամփան անցավ:
Հերթը այդ պահից
Հասավ արևին,
Որ լույսն իր արդար
Տվեց աշխարհին:
Ծաղկեցին կանաչ
Դաշտերը չքնաղ,
Շողացին սիրով
Սարերը վսեմ,
Իսկ արևմուտքում
Լուսինը գունատ
Բարեն իր անցավ
Տվեց արևին
Եվ խոհերի մեջ
Լուռ անհետացավ:
1996

ՄԱՌԱԽՈՒԴ

Ասես թե աշխարհը միտում է,
Մեծ ամպից սահում է մի սալան,
Վախվորած նա մի քիչ դողում է
Ու ծածկում ճանապարհ ու ավան:

Ու՞ր կորան կյանքի լավ օրերը
Հավքերը գեղգեղուն, այգին պերճ...
Անցողիկ է անշուշտ այս ամենը,
Միայն թե չհասնի տարեվերջ:
28.08.1996թ.

ՍՊԱՍՈՒՄ

Հորիզոնը կարմրին է տալիս,
Իսկ լուսինը թաքնվում է
Ամպերի հետևում:
Շուտով կլուսանա,
Եվ օրը
Երկար ճանապարհի նման
Կակավի նորից,
Իսկ արթնացած մարդիկ
Կզան-կզնան իրենց խոհերով,
Իրենց տագնապներով,
Բայց զոնելու հույսով:
28.08.1996թ.

ԱՆԴՈՐՐ Է ՏԻՇՈՒՄ

Արդեն մթնել է,
Անձրև է մաղում,
Մշուշների մեջ
Կարծես թէ նիրհած
Խորհրդների տաք ծուխն է երևում:

Հեռվից տուն դարձող
Հողագործի պես
Չափազանց հոգնել է
Աշխարհը կարծես...

Ու մարդիկ նստած
Սեղանների շուրջ՝
Տաք հուշերի մեջ
Խորհում են հանդարտ
Եվ հանգստանում:
Անդորր է տիրում,
Ու այն կազմի մինչև առավոտ...
24.09.1996թ.

ՎԱՐԴԱՎԱՌ

Իմ մանկության ծիծաղը զիլ
Մեր սարերի գրկում մնաց,
Իմ մանկության երազը բիլ
Մեր խրձիթի բիվին մնաց:

Էլ ետ չի զա դաշտում քաղած
Ծաղիկների բուրմունքը հեզ՝
Էլ չի նայի մայրս Ճամփից՝
Շույսով, որ դեռ ետ կզամ ես:

Արի այսօր միայն հիշենք
Լավ օրերը, որ գնացին,
Վարդավառը դաշտում տոնենք,
Տեղի շտանք տիտր լացի:

Խոտերի մեջ սեղան բացենք,
Թախծոտ հուշերը մոռանանք,
Սիրով մի թաս գինի խմենք,
Ծաղկանց զրկում գինովանանք:
28.08.1996 թ.

ՈՒՇ ԳԻՇԵՐՈՎ

*Ուշ զիշերով ես դուրս կզամ փողոց...
Արտակ Համբարձումյան*

Ուշ զիշերով ես դուրս կզամ փողոց,
Սակավամարդ ճանապարհով
Կհեռանամ անձայն
Ծանոթ կառապանի կողքով...
Ու ինձանից հետո
Փակ կմնա դուռս,
Կշնօվեն հետո իմ հետքերը ցավի...
Ինձ կհիշեն մեկ — մեկ
Ակնթարթի չափով,
Ակնթարթում կանցնի կյանքս հուշի տեսքով,
Ակնթարթում կանցնի կյանքս երազի պես,
Կանցնի կյանքս, որում
Միարանքներս բոլոր
Նվիրված են լոկ քեզ...
28.08.1996թ.

ԼՈՒՌ Է ՄԵՐ ԳՅՈՒՂՋ

Լուր է մեր գյուղը մշուշում կորած,
Լոել են այնտեղ երգերը վաղուց,
Դադարել կայտառ պարերն հայկական...
Չուր ու անձրեի կարոտից հիմա
Հասկերն են լացում,
Մահվան ճարակից փրկված հույսերը
Նոր տուն եմն փնտրում...
Կամրջի կողքին մեր տունը լրված
Լոել է նույնպես,
Հանգչել է այնտեղ
Ճրագը մորս անքուն զիշերվա...
Մայրս չի թխում
Թոնրում տաք լավաշ,
Չի օրորում ինձ
Անուշ երգերով հակված ինձ վրա...

Լուռ է մեր զյուղը մշուշում կորած,
Ամեն ինչ այնքան պայծառ ու հեռու,
Միայն հուշերը տանջում են հոգիս,
Տանջում են երկար ու չեն հեռանում...
1996թ.

ԶՄՈԱՆ ԳԻՇԵՐ

Առաջին ձյունը՝ թեթև ու անուժ
Իշավ մազերիդ, այտերիդ քնքուշ:
Խաղաղ զիշերը թվում է երազ,
Անձուկ հայացքով նայում ես վրաս:

Քո տաք այտերին ու տաք թարթիչներին
Փաթիլներն հալլած արցունք թվացին:

Իջնում էր ձյունը զիշերում անձայն,
Ծածկում ամեն ինչ ինչպես մի սավան:

Զմռան զիշեր էր՝ ճերմակ ու անվիշտ
Միայն դու ինձնից հեռացար ընդմիշտ...
18.10.1996թ.

ԵՐԶԱՆԻԿ ՀՈՒՇԵՐ

Մի խավար զիշեր
Կշրջեմ նորից հայրենի զյուղում,
Կնստեմ մեր տան
Քանդված պատերի քարերից մեկին:
Երկա՞ր կիշեմ,
Թե մեր մեծերը ինչպես են սիրով
Տներ կառուցել,
Ինչպես են վարել, ինչպես են ցանել,
Ջրել ու քաղել արտերը ոսկի՝
Առանց հոգնության,
Առանց հանգստի...
Հոգնությունն իրենց
Սայլին են բարձել
Ու կեսզիշերին տուն վերադարձել...
Այդքանից սակայն
Երջանիկ հուշ է միայն մնացել
Ու մի ցանկություն.
Մի խավար զիշեր
Կշրջեմ նորից հայրենի զյուղում...
20.11.1996թ.

ԻՐԻԿՆԱԺԱՄ

Աստղերը ժպտում լրւեղին նազով,
Դաշտը ննջում էր խաղաղ մշուշում,
Սաքուր ու հանդարտ անդորր էր տիրում
Գիշերվա մուժում:

Երկինքը ուն երկինք անուշ նիրհեցին՝
Յնորված կապույտ մութի աշխարհում
Չարտասված տխուր խոսքեր մնացին
Միայն իմ հոգում:
21.03.1997թ.

ԹԱԽԻԾ

Բարակ ամպերը թախիծ են մաղում
Իմ սրտի բոլոր անկյունների մեջ,
Նորից արթնացել այս ցուրտ խավարում,
Մի քաղցր վիշտ է տրոփում անվերջ:

Ինչքա՞ն երազներ մնացին հեռվում
Ու ինչքա՞ն լույսեր մարեցին անհույս,
Անդարձ օրերի կարոտի միզում
Խավարը իջել, փարվել է հոգուս:
30.03.1997թ.

ԳՅՈՒՂԻՍ ՃԱՍՓԱՆ

Գյուղիս ճամփան
Անվերջ խոհեր ունի,
Գյուղիս ճամփան
Տանջող մտքեր ունի,
Գյուղիս ճամփան
Հաճախ ոտքով եմ անցել,
Սարի լանջերով,
Խոր անտառների,
Ուկե արտերի միջով եմ անցել:
Այս անգամ գյուղից
Հեռացա անդարձ, հեռացա ընդմիշտ...
Գյուղը սարերի հետևում մնաց,
Իսկ իմ սրտի մեջ
Մեր հին խրճիթի կարոտը մնաց,
Հուշեր մնացին
Մեր տաք, բայց լրված խրճիթի մասին,
Ուր երբեք արդեն չեմ վերադառնա,
Ուր երբեք արդեն ճրագ չի վառվի,
Միայն հուշերում
Գյուղիս ճամփան ինձ այնտեղ կտանի,
Միայն հուշերում ես կդեգեռեմ
Գյուղում ծերացած,
Բայց հուշերիս մեջ գյուղը դեռ կապրի:
10.10.1996 թ.

ԹՈՎԻՉ ՀԵՔԻԱԹՆԵՐ

Շրջում եմ դարձյալ պուրակում այն մեր,
Որին գրկել է թախծալի աշուն,
Այզում իշխում են թովիչ հեքիաթներ,
Աշխարհը հանգիստ խոր շունչ է քաշում:

Ժպտում են պայծառ լուսին ու աստղեր,
Գալիք օրերը ներշնչում են հույս,
Քամին ցրում է դեղնած տերևներ
Տերևների հետ՝ հոգսերը հոգուս:
30.03.1997թ.

ՀՐԱԺԵՇ

Այս կյանքից թախծալի
Խոսքերը կմնան բաժանման,
Կարոտն ու հեղնանքը
Իմ սիրտը կտանջեն ամեն ժամ:

Երազները անհույս
Արցունքները սիրո կգնան,
Այս աշնան անհաստատ
Օրվա պես կչըվեն անպայման:
8.04.1997թ.

ՆԵՐԻՐ

Ների՞ ր, ների՞ ր, որ թողեցի
Քեզ մենության ցրտերի մեջ,
Ների՞ ր, որ ցավ պատճառեցի,
Ների՞ ր, գրկի՞ ր, սիրի՞ ր անվերջ:

Մեր կյանքը լի էր մեղքերով,
Մեր խոսքերում խանդն էր ապրում,
Մեր սրտերը լցնում ցավով
Ու խորտակում ու խորտակում:
28.07.1998թ.

* * *

Երբ լոկ մի ձրագ կմնա հեռվում
Ու երբ որ հեռվում աստղերը վառվեն,
Կարոտի, հույսի լուսե տաճարում
Քո պատկերը իմ մտքում կպահեմ:

Կիհշեմ կրկին անդարձ մանկության,
Հեռու մանկության լեռ ու արահետ,
Երջանիկ խոսքեր, հուշ ու երազներ
Կապրեն իմ սրտում ընդմիշտ ու հավետ:
20.06.1997թ.

ԵՐԱԶ

Ու նորից կհնչի մեղեդին,
Մեղեդին՝ երազով օրորված,
Կարթնանան վերստին խոր քնից
Հույսերս՝ մշուշում մոլորված:

Երբ մոայլ ու թախծոտ ամպերից
Արևը սիրալիր ժպտա ինձ,
Ինչպես որ լուսինը արևից
Դու նորից կփախչես ինձանից:
18.06.1997թ.

ԵՐԱԶԱՆՔ

Հեռավոր մեր չքնաղ դաշտերում
Ուզում եմ թափառել վերստին
Ու մինչեւ, ու մինչև իրիկուն
Լուր պառկել բուրավետ խոտերին:

Աղոթել, մաքրվել, խաղաղվել,
Սոռանալ ու սիրել եմ ուզում,
Հոգսերից վերանալ, սավառնել,
Երջանիկ օրեր եմ երազում:
30.05.1997թ.

* * *

Թույլ փշում է մեղմիկ քամին,,
Ու դեռ հույս կա շարունակելու...
Դեռ հնշում է այն մեղեդին,
Ուր անցյալն է արթնանալու:

Մորս վառած թռնիրը տաք
Սպասում է դեռ հայթուխին,
Իսկ խաղաղված երկնքի տակ
Եռում է դեռ կյանքը գյուղի:

Էլ ի՞նչ հարկ կա թռղնել-փախչել,
Երբ որ ոչինչ չկա հեռվում,
Կյանքն այստեղ է, դրախտն այստեղ
Քո հայրենի սուրբ օջախում:
28.07.1998թ.

ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

Արդեն ժամանակն է բաժանվելու,
Ու դարերը մեզ կզատեն կրկին,
Թեթև ամպրոպից է խորտակվելու
Անցյալն ու ներկան կապող կամուրջը հին:

Դու իմ փարոսն ես եղել կյանքում,
Եղել ես հավատս՝ սուրբ ու քնքուշ,
Անհաս բարձունքը իմ ջահել հոգու,
Իմ սերն ես եղել, եղար և հուշ:
09.04.1998թ.

ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ

Դու աղաչում ես, որ ես քեզ ներեմ,
Ներեմ մեղքերդ, ներեմ՝ ինչպես միշտ,
Սակայն հավատա, որ ուշ է արդեն,
Ամեն ինչ հիմա դարձել է մի վիշտ:

Արդեն ուժ չկա իմ ցավուտ սրտում,
Որն լրել ես, փախել շարունակ,
Ու նորից փորցձել ես չեմ ցանկանում,
Ես չեմ ցանկանում վերստին խարվել:

Հալվում են հիմա օրերը արդեն,
Հալվում է սերը, որ մարի հավետ,
Մեր սիրո մոմք դու ինքդ ես վառել,
Թույլ տուր ինձ հանգիստ մարել մոմի հետ:
11.03.1998թ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎ

Աշնան վերջին մեղեղին՝
Վերջին տերևն ընկավ վար,
Ու տարածվեց աշխարհին
Կաթնաձերմակ մի մշուշ:

Սիրո վերջին մեղեղին՝
Վերջին տերևն ընկավ վար,
Մնաց խոսքը քո վերջին,
Մնաց որպես քաղցր հուշ:

Ե՛վ բնության, և՝ սիրո
Ավարտն այստե՞ղ է լինում,
Քամին բերում է
Հեռվից ձերմակ սավան ու տաք հուշ:
14.03.1998թ.

ԱՆՑՑԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ

Ես քո ստվերն եմ եղել դարերով,
Ես միայնակ եմ ապրել սիրելով,
Դու և թախիծն ես եղել իմ կյանքուի,
Դու և արևն ես եղել իմ կյանքի:

Ոչնչի համար հիմա չեմ զղում
Ու շատ հանգիստ եմ, քանի որ զիտեմ՝
Դու կաս աշխարհում,
Թեկուզ սիրում ես ո՞չ ինձ, ուրիշին,
Որը քեզ համար քո սերն է միակ,
Որ քեզ է տվել կյանքում ամեն ինչ,
Կիսել հոգս ու ցավ...

Ոչնչի համար սակայն չեմ զղում,
Անցյալս, ներկաս քեզնով է լցված
Ու իմ գալիք վառ երազներում
Դու պիտի ապրես:
03.03.1998թ.

* * *

Անտեսելով անցյալը՝
Կյանքն է նորից շարունակվում,
Անտեսելով հին ցավերը՝
Հավատում ենք ու սպասում:

Խելազառ տանջանքների
Ու վերքերի դաժան ցավին
Դիմացել ենք շարունակ,
Դիմանում ենք և այսօր:

Ու ապրում ենք ցավով
Ու ապրում ենք սիրով,
Քանի դեռ չի մարել հոգսը
Մեր սրտերի քսորդում:

Անտեսելով անցյալը՝
Կյանքն է նորից շարունակվում,
Անտեսելով հին ցավերը՝
Հավատում ենք ու սպասում:
15.01.1998թ.

ԱՆՌՈՒՋՆԵՐ

Քնած աշխարհի անդորրը խախտող
Մեր է բերում զով պահը զիշերվա,
Ու նորից զարթնում են կարծես ալարկոտ,
Հեռվում մոլորված հույսերը ձերմակ:

Լսվում են հեռու անցյալում կորած
Խոսքերը սիրող քնքուշ էակի,
Ու նորից հանգչում, հանգչում են կամաց,
Սիրո անուրջները մեր հին օրերի:
10.09.1997թ.